



ԺԼ ՏԱՐԻ, ԹԻՒ 9

1860

ՍԵՊՏԵՄԲԵՐ 1

Առաքինի ու Քաղաքակիրր պատաճի : (Տես երես 225)

ԾԵ

Հարուստն ու աղքատ, իշխանաւորք
և հպատակք :

Դառ հարուստ ես . չնորհակալ ե-
զիր Կատուծոյ, բայց և . յիշէ որ հար-
ստութիւն տուողն Կատուած է . Բ . որ
՚ի բարին գործածելու համար տուեր է
քեզի, և Գ . որ մէկ օրուան մէջ կրնաս
ամէն ունեցածդ կորսնցընել . նայէ ու-
րեմն որ չափաւոր ըլլաս, քաղցր ու մար-
դասէր . դատարկակեցութեամբ ու շր-
ուայլութեամբ ուրիշներէն վեր ըլլալու
փոյթ մի ունենար, այլ նայէ որ առա-
քինութեամբ ու գթումեամբ ցուցը-
նես քու անձիդ վրայ որ նախախնամնւ-
թեան գործիք մըն ես իր չնորհքները
բաշխելու, աղքատաց օգնելու, սրամիտ
անձանց վրայ ձեռք դնելու, որպէս զի
ուրիշներուն բարերարութիւն ընելով
զքեզ կատարելագործես :

Խակ դու որ բարձր աստիճանի ու-

պաշտօնի մէջ ես, կը յարգեմ զքեզ՝
վասն զի ամէն իշխանութիւն Կատուծ-
մէ է . բայց գիտեմ նաև որ այն աստի-
ճանը ուրիշներուն բարեացը համար
տրուած է քեզի, որպէս զի քեզմով
միշտ արդարութիւնն յաղթող ըլլայ .
Դարձեալ գիտեմ որ դու ալ մարդ ես,
գիտեմ որ աստիճան ու պատուանուն
ըսածդ ուրիշ բանի չնմանիր՝ եթէ ոչ
գրքի մը հարուստ կազմին որ գրքին ա-
մենսին յարգը չաւելցըներ . բայց թէ
որ ձեռք տաս ստորնագունից, թէ որ
անոնց գանգատներն ու տրատունջը ար-
դարութեամբ դատես, թէ որ սուտ
խոստմունքներով չես խաբեր ու խաղ-
ցներ զիրենք, թէ որ նախ դու իրենց
բարի օրինակ կ'ըլլաս, ան ատենը կը
սիրեմես զքեզ, կը յարգեմ ու կ'աղօ-
թեմ Կատուծոյ որ կեանքդ երկրնցընէ :

Ինդհակառակն ես աղքատ եմ. պղտի
տնակի մը մէջ ծնած եմ. հարուստ աղ-
քականներ չունիմ, բարեկամներս ալ
աննշան մարդիկ են . բայց ինչ կ'ըլլայ
եղեր . Հիսուս ալ աղքատ եր, աղքատ

Էին առաքեալներն ալ և գրուած է թէ աղքատաց է արքայութիւնը : Ո՞հ , հարստութիւն չունենալս զիս չնուաստացըներ , կրնամ ամենէն հարուստ մարդուն հետ հաւասար ըլլալ . Աստուծոյ կամքը կը կատարեմ՝ վասն զի իմ ձակտի քրտինքովս կ'ապրիմ . և թէ որ իմ պարտքերս կ'ընեմ , թէ որ առաքինի ու քաղաքակիրթ եմ , շատ աւելի յարդ ունիմ քան զնենգաւոր հարուստ մը և քան զքարասիրտ իշխան մը : Ի՞ոյ մեծ ու ընդարձակ գետ մըն է ու վտանգաւոր , որով ամէնքը անունը զիտեն և թագաւոր կը կոչեն զինքը . բայց այգեգործը անոր աւերմունքներէն կը վախէ ու նաւավարը ալեկոծութենէն կը սարսափի և իրեն եզերքներուն մօտ բնակողները ողողմունքէն կը դողան : Իսկ այն առուակը որ իմ դաշտս կ'ոռոգէ , իրաւ պգտիկ է ու անծանօթ՝ անանկ որ և ոչ անուն մը ունի , բայց երկիրները կը բեղմնաւորէ և հողը կը կենդանացընէ չորութեան ժամանակ : Ի՞ոյին և իմ առուակիս ջուրը երկուքն ալ հաւասարապէս երկնքէն կու գան և երկուքն ալ կ'երթան նոյնպէս ծովուն մէջ կը կորսուին :

Իան ումանք որ զմարդ իր զգեստէն կը չափեն ու կը դատեն , բայց այսպիսիները չեն գիտեր թէ զգեստը զմարդ իրժառապէ չենէր , և թէ երբեմն կոտրած պատենի մէջ ալ ընտիր պողպատէ դանակ մը կը դրուի . և թէ ընդհակառակն կապիկը թէպէտ մետաքսէ ըզգեստներ ալ հագուին նորէն միշտ կապիկ է : Ուրիշ՝ որչափ ստակի հարըստութիւն ունենալը մի հարցըներ , հապա թէ ինչ մարդ է :

Ի՞այց տես , աս աղքատը կ'ուռի ու կը սոնքանայ . վասն զի հարուստներու հետ սկսեր է վերաբերութիւն ունենալ . ուրիշ մ' ալ հարուստը կ'ատէ ու անկէ կը փախչի և կը կարծէ որ անիկայ առաքինական զգացմոնք չկրնար ունենալ : Ո՞հ , չէ , եղբարք . լաւ հարուստներ ալ շատ կան , ինչպէս որ գէշ աղքատներ ալ չեն պակսիր . բայց աւելի լաւ է հարուստներու խիստ շատ չմօ-

տենալ , վասն զի կրնանք ստէպ մահացաց յման առիթներ ունենալ . հաւասար ընկերութեան մէջ աւելի դիւրաւ ու հանգստեամբ կրնանք ապրիլ : Ո՞եր գիխաւորները անհամսգիստ չընենք անդագար բանի մը ետևէ ըլլալով ու թախանձելով , և ամէն յոյսերնիս իրենց խոստմանցը կամ օգնութենը վրայ չդընենք : Խեղջար արուեստաւորներ , խեղջար գեղացիներ , խեղջար բոլոր իմ եղբայրներս , նորէն կ'ըսեմ , զմեզ ամենէն աւելի լաւ պաշտպանողները մեր թեերն ու մեր գլուխն է :

Ո՞պաքինի ու քաղաքակիրթ աղքատը հարուստներն ու վերնագոյնները կը սիրէ՝ բայց անոնց աչքը մոնելու համար զինքը չնուաստացըներ , իրենց ախտերը չբարձրացըներ շողոմելով , և թէպէտ փայփայէ ալ բայց միշտ ճշմարիտը կը խօսի , միտքը դնելով որ իր ազատ և իրաւացի վարմունքովը նուաստանալու տեղ՝ աւելի սիրելի և մեծարոյ կ'ըլլայ : Ալ յանձնեմ ուրեմն իբրև յիշելիք մը որ միշտ ակնուռանեամբ հողադատէիս ու վեհանչուռանեամբ հրամայէն :

Ծ2

Տէր և ծառայ :

Դրառան խեղջ վիճակի տէր մարդ մըն է , որ ուրիշ լաւագոյն արուեստ մը չունենալով ձեռքը , ինչ որ հարուստը չուզեր ընել՝ ինքը յանձն կ'առնու իրեն տեղ ընելու : Դաշնադրութիւն մըն է՝ որով երկուստեք պայմաններ կը զրուին . (Յօդ . 39) ու միշտ լսելեայն աս պայմանս ալ կ'իմացուի որ ծառան ձեռքէն եկածին չափ առաքինի ու քաղաքակիրթ մարդու մը պարտուց համեմատ պիտի ծառայէ իր տիրոջը , և թէ տէրն ալ զինքը պիտի պահպանէ և իրեն վիճակը պիտի լաւցընէ :

Ի՞արի տէր մը գիտէ որ ծառան բընութեամբ իրեն հաւասար է՝ (Յօդ . 46) ուստի հետը մարդասիրութեամբ կը վարուի , իբրև ընտանեաց մէջէն մէկը այնպէս վրան կը նայի . ստէպ ստէպ

չփոխեր, միայն պարկեշտ ու արդար բաներ իրեն կը հրամայէ, չգիտցածը կը սովորեցընէ, և բնաւ իրեն հարկաւոր եղածէն բան մը պակաս ըներ և աշխատութեանցը մէջ բաւական ժամանակ հանգիստ կը թողու: Դափազանց բնտանութիւն չբանեցընէր՝ որպէս զի իրեն պատիւը չկորսնցընէ. վրան կը վստահի՝ բայց իր ընթացքը կը դիտէ. չար օրինակ ամեննեին չտար. և թէ որ հիւանդանայ ու ծերանայ՝ երեսէ չթողուր, և խիստ լաւ դիտէ որ ծառան իր տուած կրթութեանը համեմատ բարի կամշար կ'ըլլայ:

Ի՞րաքինի ու քաղաքակիրթ ծառան դիտէ որ պէտք չէ հնազանդի տիրոջը երբ բարոյականի դէմ, և կամ իր կենացը դէմ վնաս բերող բաներ կը հրամայէ. ասկէ դուրս յամենայնի հլու, ակնածող և ամենէն ոչինչ բաներու մէջ ալ հաւատարիմէ, լեզուն կը զսպէ, և միանգամայն իր տիրոջը կեանքը, ունեցածը ու պատիւը կը պաշտպանէ: Խղած են շատ ծառաներ որ իրենց տիրոջը աղքատնալէն ետև ոչ միայն չեն ուզած զիրենք թողուլ հեռանալ, այլ իրենց աշխատութեամբը զիրենք դարմաներ են հաւատարիմութեամբ:

Ի՞յս ըսածներս նաև անոնց ալ կը վերաբերին որ խանութ մը մտած էն, կամուրիշի դաշտերը կը մշակեն: Ի՞արի ծերուկի մը հետ ձանջուորեցայ որ կ'ըսէր. Պէտք չէ բանի գործուի վրայ բընէլ զանիկայ որուն վրայ նարդ էը հասկածի, և ոչ ալ պէտք է էասկածիլ անոր վրայ որ ծառայութեան ճը բընէր ես. իսկ ծառայից ալ ասանկ կ'ըսէր.

Կամ մարդու պէս ծառայ,
Կամ չէ նէ փախիր գնա:

ԾԷ

Բարերարող և բարերարեալք:

Հարսաութեան, վիճակի և կարողութեան աս տարբերութիւները մարդկանց մէջ կապ մը կը ձեացընէն մէկ-

մէկու բարին ուզելու և մէկմէկու բարիք ընելու:

Հարուստն առատաձեռնելու կարողութիւն ունենալով՝ ըունեցողին կ'օգնէ: Ի՞այց առատաձեռնութիւնն ալ պէտք է որ չափով ու խոչեմութեամբ ըլլայ. նախ քու ունեցածդ մտածէ, վերջը անոր արդիւնքը որուն որ կ'ուզես բարերարութիւն մը ընել. ուստի աւելի ազգականներուդ պարգևէ քան թէ անծանօթ մարդկանց. արդիւնք ունեցողներու, խոչեմներու, որ քեզի շատ անգամ ծառայութիւններ ըրած ըլլան, կամ այնպիսւյ մը որ գէշի չգործածեր: Խրբոր կ'ուզես տալ, նայէ մէկէն տաս. ուրախութեամբ տուր, առանց դիմացինդ մահացընելու, առանց երեսը զարնելու, առանց փոխադարձ յուսոյ, և ոչ խիկ երախտագէտ ըլլալուն սպասելով:

Ի՞նտարակոյս փոխարէնը կ'առնես անկէ որ իրեն սիրոյն համար տրուած ինչուան կաթիլ մը ջրոյն հաշիւը կը բռնէ: Ի՞արերարեալը գոյն սրտով և ուրախութեամբ պէտք է ընդունի՝ առանց տժգոհալու, առանց իմաստակութեան: Տեսեր եմ զոմանս որ բարերարութիւն մը ընդունելնէն ետև կ'ըսէին՝ Հըմ, ինչ եծ բան է. իբէն համար բան հը ըսէլ չէ. արդէն պարտահան էր: Ի՞պերախտներ. թող անանկ ըլլայ. բայց մտածեցէք մէյմը ձեզի եղած օգուտը. ուրեմն պարտական էք ոչ միայն բերնովլ չնորհակալ ըլլալու, հապա նաև նոյնը մնաբերնիդ միշտ պահէլու էք, որպէս զի երբ առիթը գայ փոխարէնը հատուցանէք: Ի՞սպերախտը թէ անձին և թէ ուրիշներուն կը վնասէ. վասն զի ապերախտութեամբը տհաճեցընելով բարեսէր անձինքը բարերարելէն ետ կը կեցընէ:

Ի՞այց բարերարութիւնը միայն տալով ըլլար: Ի՞նչ բարերարութիւն չեն ըներ քեզի վարժապետներդ ու տէրերդ որոնք գիտութիւն կամ արուեստ մը քեզի կը սովորեցընեն. ուստի պէտք է երախտագէտ ըլլաս իրենց: Ի՞աև հիմա աս պզտի հասակիդ մէջ ալ կը նաև բարերարութիւն ընել քու չորս կողմէ եղողներուն. զոր օրինակ՝ իրենց

տհաճութեան, ձանձրութեան և աշխատութեանց պատճառը ըսլալով. ընդհակառակն ջանալով միիթարել զուրիշները, խաղաղացրնել, բարի բաներ խօսելով ու քաջալերելով։ Ա'եծնալէդ վերջը, թէ որ լաւ մշակես քու երկիրներդ, թէ որ քու քաղքիդ մէջ լաւ արուեստ մը մոցընես կամ կատարելագործես, թէ որ աղքատ ժողովուրդն աշխատցընես ու անոնց ապրուստը ձարես, բարերարութիւն ըրած կ'ըլլաս։ Ո)հէ որ ուսման ետևէ ըլլալով ձշմարտութիւն մը գուրս հանես՝ որ ամենուն օդտակար ըլլայ, թէ որ լաւ խորհուրդ մը տաս, թէ որ մէկու մը արդարութեամբ ստակ վաստըկելու ձամբայ բանաս, թէ որ ուրիշներուն պատիւը պաշտպանես, թէ որ տղայ մը կամ աղջիկ մը աղատես մոլորութեան ձամբէն՝ բարերարութիւն ըրած կ'ըլլաս։

Ա'վ պատանեակք, տեղեկացէք թէ ձեր քաղքին մէջ եղած անկելանոցը ովհիաստատեց. ովհ տուաւ ան ողորմութիւնը. ովհ ան օժիտները, օգնութիւնները, վարժատուններն ու ապաստանարանները շնորհ տուաւ. բոլորն ալ բարերարք, և գուք պէտք է որ անոնց երախտագէտ ըլլաք։

ԾԲ

Ծերք :

Ո)հէ որ ես ուզենամ ձամբորդութիւնը ընել՝ անոնց խորհուրդ կը հարցընեմ որոնք որ մէյմը նոյն ձամբան ըրեր են. անանկ չէ։ Դյերերն ալ մարդկանց մէջ ան ուզեւորներն են որ մեր նոր սկսելու ձամբան արդէն իրենք ըրած են. չարն ու բարին տեսած, վտանգները, դժուարուտ անցքերն և հանգչելու յարմար տեղուանքը սովորած են։ Ուրեմն իրենց խորհուրդ հարցընենք որ իրենց փորձովը մեզի առաջնորդեն. վասն զի ովհ որ կ'ուզէ իր անձին տուժիքը փորձառու ըլլալ, կը տեսնայ թէ որչափ սուզի կը նստի։

Դյերերն արդէն խել մը զուարձու.

Թիւններէ զուրկ են. գոնէ երիտասարդաց իրենց վրայ ունեցած սէրն ու յարգութիւնը տեսնելով միսիթարութիւն։ Ա'միիթէատրոնի մը աստիճաններուն վրայ նստած էին հին հին Յունաստանի այլ և այլ ժողովուրդներ ու եղած խաղարկութիւնները կը գիտէին. հոն ծեր մը եկաւ և սկսաւ այլ և այլ ազգաց առջեւէն անցնիլ, բայց չեղաւ ժողովուրդ մը որ իրեն նստելու տեղ տայ. երբոր Ապարտացւոց առջեւը հասաւ՝ բոլոր երիտասարդները ամէնքը մէկէն ոտքի ելան, որպէս զի զինքը նստեցընեն. ան ատեն ամբողջ հանդիսարանը սկսաւ ծափահարութիւն ընել և ծերն ալ գոչեց, Բոլոր Յոյնք առաջինութիւնը էլ ճանշնան, բայց մայն Սպարտացին էլ գործադրէն։ Ա'ենք ալ գոհ ըլլանք միայն ծափ զարնելով գովել բարիք ընողը, այլնաև հետեւող ըլլանք։

Դյերերը ուրիշ այնչափ նեղութիւններ կը քաշեն՝ թող միսիթարութիւն մըն ալ ունենան, տեսնալով երիտասարդաց իրենց վրայ ունեցած ինսամքը։ Այէ Պրիգորիկը, ինչ ազնիւ տղայէ. ստէպ ստէպ Ա'խնաս ծերուկին այցելութիւն կ'ընէ, որ խեղչը որդիքը կորսընյնելով չոր գլուխ մնացած է. իրեն անցած գացած պատմութիւններ պատմել կու տայ, խորհուրդ կը հարցընէ, քալելու որ ելլայ իրեն ընկերութիւն կ'ընէ, թէ թէ ծառայութիւններ կ'ընէ, կը ջանայ որ ամենեին նեղութիւն չտայ և իրեն ձանձրանափ կեանքը իր երիտասարդական աշխուժովը կը կենդանացընէ։ Ա'խնասն ալ բոլորովին ոգի կ'առնու, ինչպէս թէ որ ծերացած ծառի մը բունին վրայ նոր պատուաստ մը ընես. իսկ Պրիգորիկը, անտարակոյս ատենօք առաքինի ու քաղաքակիրթ մարդ մը կ'ըլլայ։

Ա'վ պատանեակք, դուք հիմա արգելք մը չունիք ու աշխայժ էք. բնութիւնը զձեզ կը զուարժացընէ, արտօրէից կենդանութիւնը զձեզ կը միսիթարէ, մարգաց ծաղկազարդ կանանչութիւնը, անտառաց քաղցր ստուերները. վերջապէս ամէն բան այս հասակներ.

նուդ մէջ ձեզի զուարթ կ'երևայ, և
բիւր ապագայ ուրախարար յոյսեր ձեր
միտքը կը զրաւեն . բայց ատենը կու
գայ որ տարիներուն շատութեանը հետ
մտածութիւններ, հոգեր, տկարու-
թիւններ կը սկսին վրանիդ տիրել . վեր-
ջը եթէ լաւ ապրիք՝ կը ծերանաք .
ինչպէս կը փափաքիք ուրեմն որ ան ա-
տեն ձեր հետը վարուին :

ԾԲ

Եկեղեցականք :

Վահանայք Աստուծոյ կամաց թարգ-
մանքն են և միջնորդք արարքն և մեր
մէջը, որոնք առաքինութեամբ ու գի-
տութեամբ լցեալ, խոհեմական եռան-
դեամբ ճշմարտութիւնը կը տարածեն,
ստութիւնը կը խափանեն և զմարդիկ
իրենց ախտերէն կը զգուշացընեն : Ին-
տանեաց քաղցրութենէն կը հրաժա-
րին, որ Վրիստոսի որդիքը իրենց ըն-
տանիք ընեն . աղքատներն իրենց օգ-
նութեանը կը դիմեն, տարակուսեալ-
ները խորհուրդ կը հարցընեն, հիւանդ-
ները իրենցմէ միմիթարութիւն կը խըն-
դրեն : Խրենք են որ յանուն Աստուծոյ՝
հզօրագունից ճշմարտութիւնը կը քա-
րոզեն, տգետները կը կրթեն, հարս-
տահարեալները կը պաշտպանեն, թըշ-
նամիները կը հաշտեցընեն . ամպինէն
ընդհանրական պարտքերնիս մեզի կը
քարոզեն, և խոստովանարանէն ալ՝
նոյն ընդհանուր պարտքերը առանձին
իւրաքանչիւրին թերութեանը համե-
մատ կը սովորեցընեն . քահանայք ըզ-
մեզ մկրտելովնին եղբայրակից ըրին
քրիստոնէից, և քահանայք պիտի ըլ-
լան մեր մահուան անկողնոցն քով կե-
ցողները, և նաև մեռնելնէս վերջն ալ
իրենք պիտի օրհնեն ու օգնեն մեզի :
Ինչ մեծարելի մարդիկ, ինչ երկնային
պաշտօն է իրենցը :

Կ

Կանայք :

Կանանց պարտական ենք մեր կեան-
քը, մեր առջի մնունդը, և ընդունած
առաջին գորովալիր խնամքը . պէտք չէ
ուրեմն որ իրենց հետ ամենայն ակնա-
ծութեամբ վարուինք :

Կրենք կազմուածքով և վարժութք-
մեզմէ աւելի փափուկ են . աւելի ծանր
հիւանդութիւններ կը քաշեն, և կե-
նաց փոփոխութիւննին քիչ է . մարդս
իրենց բնական պաշտպանն է . ինչպէս
վատ է ան մարդը որ զիրենք կը հարըս-
տահարէ, կը տրտմեցընէ և պէտք ե-
ղած ակնածութիւնն ու խնամքը ըներ:

Կանայք իրենց զգայուն սրտովը ա-
մէն խեղձութեանց վրայ կը գթան ու
կը կարեկցին . զիրենք միշտ հիւանդ-
ներու քով կը տեսնանք, և խեղձ հի-
ւանդը զրեթէ ամենելին ըսարչարուիր
երբ կին մը ըլլայ քովք : Ո այ ան ան-
զգամին որ կանանց փափուկ սրտովը
զեղծանելով՝ իրենց խզձնուանաց ծան-
րութեանն և անպատուութեանց պատ-
ճառ կ'ըլլայ :

Ո՞վ կայ որ իր մօրը և քոյրերուն վը-
րայ մտածէ ու սիրտը չչարժի . ուրիշ
կանանց հետ ալ վարուելու ժամանակ՝
զիրենք գարձեալ մտքերնիդ բերեք, և
յիշեցէք՝ որ եթէ մէկը իրենց առաքի-
նութեանը գէմ անիրաւած ըլլար և
կամ զիրենք թշնամանէր, ինչ զգաց-
մոնք կ'ունենայիք :

Ո՞տքերնիդ պահեցէք ուրեմն, ով
պատանեակք, որ կանանց հետ վարուե-
լու կերպերնէդ կը կախուի ձեր երջան-
կութեան և ամենաղասն թշուառու-
թեան վայրկեանները և ամբողջ ձեր
կենաց սաստիկ տաննանքները : Ո՞վ
պատանեակք, որ կու գայ որ աւելի լաւ
ու պայծառ կ'ըմբռնէք ըսածս և ինծի
իրառունք ունի եղեր կ'ըսեք :

ԿԱ.

Նախորդք և յաջորդք

Դանուական ցեղէ իջնալուդ համար կ'ուռիս կը հպարտանաս . անմիտ , մի-թէ հարցդ առաքինութիւնը քուկդ է . և ինչպէս կրնաս ուրիշն բանին վրայ պարծիլ . քու նախորդներդ պատերազմ ներու մէջ արիացան , խոհեմ գտնուեցան իրենց խորհրդոցը մէջ , իրենց պաշտօններովը հասարակաց բարեաց պատճառ եղան և ամէնքը զիրենք կը մեծարէին . պատուէ ուրեմն անոնց յիշատակը և մի պահանջեր որ յարգեն ու մեծարեն 'ի քեզ քու պապէրուդ ունեցած առաքինութիւնները՝ յորոց դու զուրկ ես : Դաքինութիւնը արեան հետ վերաբերութիւն չունի . երևելի տնհէ ես , ուրեմն մարդիկ քեզմէ աւելի գիտութիւն և աւելի բարեսրտութիւն կը պահանջեն . թէ որ չունենաս՝ իրաւամբ կ'արհամարհեն . Մարդո ինչը զնուը իւ պապուէ :

Իսյոյ երախտագէտ պէտք է ըլլանք աս կենաց ձամբուն մէջ մեզմէ առաջ գայողներուն , իրենց մեզի ըրած այնչափ բարեացը համար , և ոչ թէ քանի մը փնտուց համար անիծենք . և իրաւունէ , պատմութեանց մէջ մեր նախորդներուն զեղծմունքները , ամօթալի գործերն ու յանցանքները կը տեսնենք . շատ մը նախապաշարմունքներ ունեին իրենք՝ որ մենք չունինք , իրենց մէ աւելի տեղեկութիւն ու գիտութիւն ստացած ենք , և շատ աւելի հանգիստ ենք : Փառք Ծատուծոյ և փառք իրեն նախախնամութեանը որ հետզհետէ կը զօրացընէ զմարդիկ արդարութեամբ և ձշմարտութեամբ յառաջադիմելու . բայց ասովլ պէտք չէ որ մեր նախորդները արհամարհենք : Խնչ պիտի ընէինք մենք՝ թէ որ իրենք այնչափ լաւ գիտեր ու արուեստներ գտած՝ և իրենց աշխատութեամբը զանոնք մեզի սովորցուցած ըլլային . այնչափ մեծաշէն քաղաքներ , այնչափ գետերուն ըրած փնա-

սը խափանելու համար եղած աշխատութիւներ , այնչափ ձամբաներ , զուարձութեան համար թէատրոններ , պաշտամնութեան համար բերդեր , եկեղեցիներ , վարժարաբաններ , օրէնքներ , վարդապետութիւններ՝ բոլորն ալ իրենցմէ ունեցեր ենք , ուրեմն միշտ պէտք է չնորհակալ ըլլանք :

Ընորհակալ ըլլանք և գործքով ալ նոյնը մեր յաջորդներուն սովորեցընենք , որչափ կրնանք մեր կողմանէ գովելով ու մեծարելով մեր ծերերուն մեզի ըրած բարերարութիւնները . և իրաւունէ , վասն զի մարդիկ ամէնքը մէկէն որ և իցէ ժամանակ ալ ապրած ըլլան՝ բոլորը մէկ ընտանիք մը կը կազմեն . ուրեմն երբ բանի գործքի մը ձեռք կը զարնենք , պտուղը մենք պիտի չքաղենք ըսելով՝ պէտք չէ լքանինք . մեր յաջորդները պտուղը կը վայելեն կ'օգտուին ու զմեզ կ'օրհնեն : Ծա տնկած ձիթենիս իմ մեռնելէս վերջը պիտի սկսի պտուղ տալ , հոգ չէ . ես ալ իմ չտնկած ծառերէս շատին պտուղը կը վայելեմ . տղոց դատիարակութիւն ընելով իրենց սովորեցուցած բաներս գիտեմ որ ապագայից օգտին համար է , վնաս չունի . բաւական է որ իրենք օգտուին , ու անոր համար սիրով յանձն կ'առնեմ զիրենք կը թել . ապագայք ալ իմ եղանակը են :

Ո՞իշտ ապագային վրայ յուսանիս մարդկանց ներկայ ապերախտութեանը մէջ՝ մեծ միսիթարութիւն է մեզի . մանաւանդ երբ կը տեսնենք որ մեր բարի խորհուրդները չեն յաջողիր և մեր գովելի գիտաւորութիւնները չարախնօսութեան նիւթ . կ'ըլլան : Բարի գործք մը ոչ երեկք կը կորսուի , թէ որ այսօր մեզի շահ մը չըերեր , ժամանակով կը ընայ օգտակար ըլլալ ուրիշներուն որք են մեր որդիքն ու մեր եղանակը :

Կը շարունակուի :

